

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀԱՆՍԱԳԻՐԿ



ՀԱՅԴԵՏԿՐԱՏ

1994

0

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱԶԳԻՆԱԿԵՐՏԵՆԻ ԱՊԻ

13594

ՀԱՅԿ



ՀԱՅԱՍՏԱՆԻ

Արտ. ԿԵՅՍ

~~1965
ՄԱՐՏ 1965
Վ. Ի. Լենին անվան
ԱՊԻ ԿԻՏԱԲՒՅՈՒՄԻ
ԲԻԲԼԻՈՏԵԿԱ ԱՊԻ
ՈՒՆ. Վ. Ի. Լենին~~

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԱԶԳԻՆԱԿԵՐՏԵՆԻ
1955

ԲԻԲԼԻՈՏԵԿԱ
Տեղանակերտի օրինակ
ԱՊԻ անվան Վ. Ի. Լենին

*Կազմը, Ֆրոնտիսպիսը
անվանաթերթը եւ սկզբնատառերը
ՀՍՍՌ ժողովրդական նկարիչ
Հ. ԿՈՉՈՅԱՆԻ*

**ВАРДАН АЙГЕКЦИ
БАСНИ**

*(На армянском языке)
Армянское государственное издательство
(Айпетрат), Ереван, 1955*

ՎԱՐԳԱՆ ԱՅԳԵԿՑԻ

Առական բանա է հրատարի
Երգողն է սուրբ և պանծալի
Բարունեաց բարուն բարի
Որոյ Վարդան զբայ կոչի:

Ա.

«Վնչ ինձ, ով իմ որդիներ, որ աշխարհ պիտի գաք ինձանից հետո, որովհետև ցանկանում եմ ձեզ տեսնել և շնորհակալուիլ Ձեր գործերի մեջ արդեն հող եմ դարձել: Ապա ուրեմն այս դրքով կխոսեմ ձեզ հետ մինչև հինգ և և մինչև յոթ տերունդ և հողով կմնամ ձեր մեջ», — այսպես ավանդել է Վարդան Այգեցին, ի վանական, որ հեղինակել է բաղամթիվ առաջախառն քարոզներ և որի անունով են կոչել միջնադարյան հայ առակները և մանրադիպերքները: Բայց ժողովածուները, մերթ անվանելով «Գիրք առաջիկա ստացեալ վարդապետին Վարդանայ ի պետս հոգևոյ և մարմնոյ պիտանի», մերթ՝ «Վարդան Այգեցի վարդապետի ստացեալ» և մերթ՝ «Վարդանագիրք»:

Այս և այլ այսպիսի վերնագրերով հայտնի ձեռագրերը մինչև XVII դարն անընդհատ փոփոխվել են և ապա քարացել՝ երբ Ամստերդամում 1665 թվին տպագրվել է հայ

III

առականքի առաջին ժողովածուն՝ «Գիրք աշխարհաց և աստու-
պելամանութեանց, որ է Ազուէտագիրք» վերնագրով:

Ո՛վ է Վարդան Այգեկցին կամ Այգեցին, որին հեա-
նորդները տարբերելու համար XIII դարու մյուս Վարդան-
ներից, անվանել են Մեծ Վարդան: Գծբխտաբար շատ
թերի են տեղեկութունները նրա կյանքի և գործունեու-
թյան մասին և այն, ինչ որ հայտնի է, մեծ մասամբ քաղ-
ված է նրա քարոզներից և թղթերից:

Մտույզ հայտնի չէ նրա ծննդյան թվականը: Հիշատա-
կարանների մեջ այն ժամանակ սովորութիւնն չէր նշանա-
կել ծննդյան թվականը: Իր քարոզների մեջ մի քանի ան-
գամ նա հիշատակում է իր ծննդավայրը՝ Մարաթը կամ
Մարաթն, որ Հայեպի մերձակա մի ավան էր և էր այն
ժամանակի սիրիական գաղութներից մեկը: Աւրեմն, եթե
ծննդավայրի անունով կոչելու լինենք Վարդանին, ուղա
նրան պետք է անվանել Վարդան Մարաթեցի (սՎարդան...
որ է Մարաթա), ինչպես ինքն է գրել): Մակայն հայտնի
փաստ է, որ համարի վանականներն իրենց կոչում էին ոչ
թե ծննդավայրի, այլ այն վանքի կամ մենաստանների
կից զգալի անունով, որտեղ նրանք հռչակվել էին: Այդ
ձևով էլ Մարաթեցին հռչակվում է Այգեկցի կամ Այգեցի,
ի հիշատակ այն անապատի, ուր քաշվում է նա և ապրում
մինչև մահ:

Վարդանը Մարաթից տեղափոխվում է Կիլիկիայի Ար-
քակաղնի վանքը, որ աթոռանիստ վայր էր և նշանավոր
էր իր գլխորդով, որտեղ հենց այդ ժամանակ բոբրեզվել
էր պաշարը Արևմուտքի և Արևելքի կողմնակիցների մի-
ջև: Հզորանում էր Ռուբինյան հարստութիւնը Կիլիկիա-
յում: Քաղաքները ծաղկում էին. արևմուտքից բազմազգի

վաճառականներ արտահանում և ներմուծում էին հարուստ
ապրանքներ: Քաղաքները ճոխ վաճառանոցներ էին և շա-
հաստաններ: Առևտրի հետ ծաղկում էր պերճութունը և
շոսյութիւնը մի կողմից, մյուս կողմից տնանկները և
աղքատները կազմում էին այնպիսի թիվ, որոնց օտա-
հարվող իրավունքների պաշտպանութան մասին խոսում է
հենց ինքը Վարդանը: Քաղաքների հարստացման հետ միա-
սին փոխվում էին նաև Կիլիկիայի հայերի, առաջին հեր-
թիւն վաճառականների, բարքերը և լեզուներ: Այսպես կոչ-
ված արևելքցիների պայքարը ընդդէմ արևմուտքից եկող
հոսանքի, դասային շահերի քաղաքական պաշտպանութիւ-
նից բացի, նպատակ ուներ նաև անաղարտ պահել հայ լե-
զուներ և հայ եկեղեցիներ, որի հիմքերը խարխուլում էին հենց
այդ վաճառականները:

Արքակազմի վանքում ուսանելուց հետո Վարդանն իր-
բև շարժվել հաստատվում է Կիլիկիայի Գյուեկ քաղաքում:
Նրա արտասանած քարոզները վկայում են, որ Մարաթե-
ցին հարել է արևելքցիների բանակին, այսինքն նրանց,
որոնք իդուր ջանում էին պատվար կանգնել նոր հոսան-
քի դեմ: Այսպես, Վարդանը եկեղեցու բեմից հանդիմանում
է քաղաքում ապրող կանանց, որոնք ասիրում են դուզվել
և զորդարել աշքերը և երեսը զանազան դեղերով ի գա-
թիակաթիւն պատանիներին: Նա խոսում է այն կանոնից
մասին, որոնք շարք դեղերով իրենց զրկում են ծնելու
կարողութիւնից և այդ սովորեցնում են նաև ուրիշներին:
Նա գծովքի դատաստանով է սպանում նրանց, որոնք շա-
հով դրամ են տալիս, զրկում են տնանկին և մշակին,
խարում են կշեռքի մեջ, կաթի մեջ ջուր են խառնում և
տունատարակ խարդախ մարդիկ են: Նրան՝ իբրև խոսող-

վանահոր, Դրուկի բնակիչները հավանորեն գաղտնի պատմել են նաև ավելի ծանր մեղքերը: Եվ տարիներ հետո այդ մասերի է ակնարկում Վարդանը՝ անապատի մեջ հիշելով վազգեմի Դրուկը: Հեն, ով իմ սրգիները, մանկությունից մինչև ձեռնաթուղի շրջեցի աշխարհում և տեսա բազմաթիվ մեղքեր և ավելի շատ գաղտնաբար լսեցիք:

Դրուկում նրան հալածում են Արդյոթ նրանք էին հալածում, որոնց յուր քարոզներով խաբարանում էր Վարդանը, թե կար այլ պատճառ. այդ մասին ոչինչ չի ավանդում ոչ մի այլ ժամանակակից: Նա միայն դառնությամբ գրում է. «Վնջ նրան, ում իշխան կամ առաջնորդ կկարգեն այս շար ու դաժան ժամանակն»:

Ապաստանելով Ամիթ քաղաքում և այնտեղ ևս խաղաղություն չգտնելով, Վարդանը որոշում է թողնել «աշխարհը» և անապատ քաշվել: Կիլիկիայի հայ իշխան Պաղտինի օժանդակությամբ նա հեռանում է Մե լիւան կողմերը՝ Անտիոքի մոտ, որտեղ ապրում էին քրճագլխաւ և մենակյաց անապատականները: Նա տեղավորվում է Այգեկ կամ Այդի կոչված վայրում, և այնտեղից էլ մնում է Այգեկցի կամ Այգեցի կոչումը: Հավանական է, որ այդ Այգեկը մի վանք էր և այգի՝ մրգաբեր ծառերով, որ մշակել էին հենց իրենք անապատականները:

Պաղտին իշխանին ուղղած թղթի մեջ Այգեցին իր մասին հետևյալն է գրում. «Ենվ ես ողորմելի Վարդանս, գիտուններից սոփեսոս... այս տառերը գրեցի Պաղտին իշխանի խնդրով... որովհետև մեր բնիկ ժառանգությունից հալածական եղանք և եկանք Այգեկ... և հայոց թվականն էր Ի-ԿԱ (1212) և հայոց թագավորն էր Լևոնն Թուրքիյանց կիլիկիայում»:

Մակայն անապատում ևս նա խաղաղություն չի գտնում: «Դրուկից եկանք Այգեկի սուրբ ուխտը, — գրում է Վարդանը, — և երեք տարի անց երկու անգամ պատահեց, որ ես և ուխտի երկու զինավոր կաթաղները նստեցինք և բավականցինք վանահորը և նրա բարեկամին: Բայց այդ հասարակ բամբասանք չէր, որով անապատականները վարաւում էին իրենց ձանձորութիւնը: Այդ պայթաբ էր ուղղված վանահոր, ավելի ճիշտ Այգեկում տիրող բարքերի դեմ: Բանն այն է, որ անապատականներն ապրում էին փութիւմ կյանքով, ունեին այգի և արտ և ճգնելու փոխարեն գիշերն աղաղակներով փախցնում էին վայրի դաշաներին և ցերեկը պարսաքաբ էին արձակում թռչունների վրա, որպեսզի պաշտպանեն պտուղները և խաղողի ողկույզները: Ենվ այս ամենի վրա ավելանում է մեծագույն կորուստ, որովհետև վեճը և կռիվը, նախանձը և մախանձը չի պահաւում, սա իմ և այն քննն է (տաւում են անապատականները): Եվ այն ժամանակ այդ մենակյացի կյանք չէ: այլ աշխարհականի»:

Ինքը Վարդանը զինավորում է պայթաբն այդ բարքերի դեմ: Ենթեւ տարի է, որ սատանան մեր մեջ նախանձ սերմանեց և վեճ ու աղաղակ մրգաբեր ծառերի համար: Ենվ մենք մեծ պատերազմի և արտմության մեջ էինք այս երկու տարին և չկարողացանք ելք գտնել: Բայց եւլըք գտնում են և հավանորեն ինքը Վարդանն է ցույց տալիս ելքը: Մի կիրակի անապատականները հաղաբեր ծառերը՝ գտնության աղբյուր թղենիները և ընկաղենիները, սերկեկի և արքակաղնի ծառերը: Ենվ ես մեղավորս քաջայնբում էի իմ կաթաղներին, թե մի երկնչեք, որովհետև այս վարձք է և ոչ դատա-

պարտութիւնն, պարծանք է անապատիս և ոչ նախա-
տինքս:

1220 թվին Վարդան Այդեցին հայտնում է Դրաղարկի
վանքում: Այդտեղ է գրել նա յուր առակը՝ «Վասն սասն
վաճառականաց: որ են մարդիկ» և առակի մեկնութիւնը:
Այդ մասին ինքը հետեյալն է պատմում. «Ե՛ս, որդոսնիկ
Վարդան Մարաթեցիս, այս մենավոր խոցի մեջ, աստու-
ծարնակ ուխտի ստե՛մաններում, որ կոչվում է Դրաղարկ,
կամեցա սասը առակավոր բանով ձեացնել վաճառականնե-
րին և այն ութ որդայթը, որ կա նրանց: անաչ... Ե՛վ շատ
օրեր աշխատեցի և բազում անդամ սկսեցի և չհմոզովեց և
որտմեյով վարանեցի և ստույգ իմացա, որ իմ քաղմաթիվ
անօրենութիւնները խա՛վարեցին իմ միտքը՝ և փակեցին
իմ շրթունքները և կապեցին լեզուս...: Բայց և այնպես
ավարտում է յուր աշխատութիւնը, որ ուղղված էր սիս-
կայութեան, լեզվագարութեան, որովայնամոյութեան, զըս-
կանքի, շնութեան, կախարչութեան և անողջութեան
դեմ:

Այդեցու մանվան թվականը հայտնի չէ: Նա հիշատա-
կում է Քրիստոսի և անծառայող և անծառայող ազգի ձուտքը Հայաս-
տան: Պատքը վերաբերում է մոզողներին, որոնք Հայաս-
տան մտան 1220-ի սկզբներին: Ինքն իր մասին գրում
է, որ ձեռնութիւնը և երկարատե ցավերը կուրացրին իմ
միտքը և աչքերը: Եթէ բնգուններ, որ նա իբրք ապրել
է մինչև զգառանցյալ և գարշելիք ալեորութիւնը, ինչպես
ինքն է գրում, ապա ուրեմն հիմք կա ստեղծ, որ նա
1220-ական թվականներին չի մեռել, այլ ավելի ուշ: Ըստ
Ն. Մառի՝ Այդեցին 13-րդ դարի 10-ական թվականներին
գնա սպրում էր:

եվ մինչև խորին ձեռնութիւն Այդեցին խրատել է և
բարոյախոսել, մարտնչել և խարաղանել՝ երբեմն եկեղե-
ցիներում, երբեմն քաղաքի հրապարակներում և երբեմն
սուաքելով թղթեր, և առակխառն քաղաղներ, միս դնելով
այն, որ բանպետք կայծաքարը և աննշան երկաթը պար-
զիում են հուր՝ ի սպաս մարդկային կյանքի:

Բ.

Մեղանում Վարդան Այդեցին առաջինը չէ, որ հորինել
և առակներ նրանից առաջ արդեն հայտնի էր Միթիթար
Կոստը, որը իբրավամբ կարող էր համարվել հայրը հայ առա-
կարանութեան Հայտնի է, որ 11-րդ դարում գլխոցներում
ավանդում էին առանձին առակա՝ ճառասպելավարժու-
թիւնն: անվան տակ Հայ մատենադերեքից ոմանք ոչ
միայն հաստատում են առակաների և ժողովրդական
գրույցները գոյութիւնը դեռ ևս վաղնջական ժամանակ,
այլև ոմանք, ահամա մեջ են բերում այն գրույցները,
«Որ ի գունհիկա պատմի առակայ», ինչպես օրինակ Գր.
Մաղիստրոսը, որը պատմում է արտուտի առակը: Ոմանք՝
ինչպես Անանիա Իմաստանքը, Հովհան Օձնեցին, և Հով-
հան Մանդակունին և ուրիշները սիրել են բարեխաղով
խոսել, մի ձև, որ այնքան մեծ վարպետութեամբ կիրառել
և Վարդան Այդեցին:

Հայտնի է և այն, որ հայ պատմիչները և առևտարակ
եկեղեցիներ չեն սիրել և հաշմել են ժողովրդական գրույց-
ները, որոնց թվում նաև երթաթը և առակը և երբեք ներ-
սես Ենթահալու մասին կիրակոս Գանձակեցին գրում է,
«Չի այնպես էին կամք որդոյն, զի հնար իցե ոչ ք խո-

սեցի ի խոսս աշխարհականս, բաց ի գրոց, ոչ ի գինարբուս և ոչ այլ ուրախությունս: Վասն այնորիկ արար նա երգս և ուսույց այնոցիկ, որ պահեին գրերդն: զի փոխանակ վայրապար ձայնից, գայն ասացեանս: Բերդի գինվորն երը շատորինս լեզվով պատմում էին «անառակ» գրույցներ: Այդպես էին նաև ուսմիկները և վաճառականները գինարբուքի, այլ ուրախության և առհասարակ իրենց ստորյայի մեջ: Բայց այդպես էին նաև եկեղեցու զգիրները և հոգևորականների ստորին խավը, որ դումարվում էր ուսմիկների որդիներին: Հետևաբար նրանց ավելի անորժիկ էին «վայրապար» գրույցները՝ պարզ լեզվով, բան խրթին և ճուտմ ճարտասանությունը, տրամախոսությունը, աստվածարանական գիտելիքները: Գեղազանցապես այդ խավից էին նաև այն՝ երբեմն անանուն գրիչները, որոնք զժամը տքնությամբ բազմացնում էին ձեռագրերը:

Եթե ներսես Շնորհային հնար էր որոնում, որպեսզի այլևս ոչ ոք խոսի «աշխարհի» լեզվով կամ պեղջուկ բարբառով, ապա Իրակողմանի կիսներ այդ փաստը բացատրելի միայն իբրև ձգտում վերջ տալու «ստորին» հայերենին: Կարելի է ենթադրել, որ գինվորները «վայրապար» խոսում էին բարբառով, որը հայրեն չէր և անա Շնորհային նպատակ է դնում այնպիսիներին լեզու սովորեցնել և ինքը հեղինակում է առակներ և հանելուկներ, որ զբաված են ոչ թե խրթին գրաբարով, այլ պարզ հայրեն:

Ահա օրինակ Շնորհալու մի հանելուկը նուսն մասին:

Է՛կ նա կտես, կոնակ բոլոր
Սկնայակ գինով լցած սկնոր
Եկա՞մի՞ր մեղու՞մ ի ներս արվոր
Ե՞նչո՞ւր զու կեր գին՞ջ մեղրի՞մ ծուր:

X

Ուրեմն հայ հին դարության մեջ նոր չէր ոչ առակը և ոչ էլ բարոյախոսությունն առհասարակ: Կային եկեղեցական ջարդիչներ, որոնք խոսել և գրել էին «օրինակով»: Եթե զպրոցներում ավանդում էին «առասպելավարժությունն» իբրև առանձին առարկա, ապա կարելի է ենթադրել, որ գոյություն են ունեցել նաև դասագրքեր կամ առասպելների ու առակների ժողովածուներ՝ իբրև նյութ դասավանդման: Եթե ավելացնենք և այն, որ Եզդուսի առակները շատ վաղուց ծանոթ էին հայերին, ինչպես և «Վոյպիանու փրիխոփայի» (ըստ թոմաս Արծրունու) առակները, ապա կարելի է ասել, որ Վարդանի առակների ժողովածուից առաջ եղել են առակների այլ ժողովածուներ, որոնք նետադաշում կամ խառնվել են վարդանի առակագանակն և կամ երև շարունակել են առանձին մնայ, ապա վերականգնվել են վարդանի անունով: Նույնիսկ հայ կենդանական վեպի որոշ տարբեր մասեր են վարդանագրքերի՝ մեջ և հետագա սերունդները շարունակել են վարդան Այվեցու վերայրից առակների ժողովածուների մեծ մասը:

«Եթե նույնիսկ պարզվի,— գրում է Ն. Մառը,— որ որևէ անհայտ ջարդիչ առակի կիրառել է ուսուցման ժամանակ, վարդանի նշանակութունը գրանով չի նսեմանա: Վարդանը, որ ստեղծողն էր առակախառն ջարդիչ նոր տեսակի, ստացավ տաղանդավոր ջարդիչի եզակի համբավ, հիմք դնելով առակների լայն օգտագործման՝ բարոյախոսական նպատակով: Որքան էլ պարզ լինեն ձևերը, որոնցով առասպելիչներ և հեքիաթները դասնում են առակներ, հայ գրականության մեջ այդ ձևերն իբրև կիրառող առաջմ մենք ճանաչում ենք վարդանին և հենց նրա այլաբանությունները կարող են համարվել հայերի գրական այդ սեռի լավագույնը»

XI

դույն օրհնակաները և նախաբար առակաները որոնք Վարդանի ժողովածուի հիմնական շերտն են կազմում, ամբողջովին և հավիտյան կիսան հաղպած Վարդանի անվան, թեկուզ նրանցից մեկի կամ երկուսի վրա ուրիշ, ավելի հին հեղինակներ ունենան որևէ իրավունք»:

Մեզ այստեղ չի գրադիպում այն խնդիրը, որ Վարդանին վերադրված մտ շորս հարյուր առականերից և մանրավեպերից քանիսն են Վարդանի բուն գործը և քանիսն հավելված են հետագայում, ինչպես և չենք զբաղվել առհասարակ առակաների նշանակութան քննութամբ: Բոլոր առակազիրներից և պատմիչներից առաջ առակը հորինել և պատմել է ինքը ժողովուրդը և այդ տեսակետից երկրորդական նշանակութուն ունի առակազրի անձնավորության խնդիրը:

Վարդան Այգեցու նշանակութունը մեծ է ամենից առաջ իբրև առական ժողովուրդ և առակաները մեկնության հետ միասին ճաշակով և վարպետութամբ ամբողջացնող հեղինակ: Անա Այգեցին կամենում է իսբարպանել ցանկատեսք մարմինը և վեր նանել հոգին, իբրև մարդու բուն էություն: Կձանձրանալ ունեկնդիրը, եթե նա ավետարանից մի նախադասութուն բնարան ընդունելով, հյուսեր քարոզը: Այգեցին գրա փոխարեն գործ է անում պարզ զրույցի ձևը, ինչպես կյանք տեսած մի ձերունի: Կիրառելի սրբուն, և ասում է «Եզը մի լծիր էշի հետ. եզը որոճող է և էշը՝ ոչ: Այգեցու հոգին անմաս է մարմնից, որովհետև հոգին իմաստուն է և մարմինը ցանկատանը»:

Թերեմք մի այլ օրինակ Վարդանի առակախառն քարոզներից. «Մի մարդ ունի շորս էշ, երեքը երիտասարդ և ուժով և մեկը՝ պտտով և վատուժ: Եվ տեղը երեքին չէր բեռնում, այլ խնամում էր և դարձանում, իսկ պա-

ռով էշին ծանր էր բեռնում և ընկավ պտտով էշը և այլև չկարողացավ տանել ծանր բեռը: Այսպես մարդս շորս ժամանակ ունի՝ տղայութուն, երիտասարդութուն, կատարյալ հասակ և ժերութուն: Այն երեք հասակն որ պարզոր են, մարդ չէ կամենում բառնալ բեռով, այլ պարտում և դերացնում է ուտելով և ըմպելով և ամեն ծանր բեռ բեռնում է ձերբացած մարմնի վրա»:

Վարդան Այգեցու այս և այս կարգի առակաները բնորոշ են իրեն կատարյալ և ամբողջական արվեստով: Հետագայում առակաները փոփոխության են ենթարկվել, մշակվել են՝ բերանացի պատմելով, ապա տարբեր զրիչների մեղքով դրի են անվել, յուրբարանչյուր անգամ կրելով ժամանակի և պատմողի կնիքը: Այգեցու առաջացել են առակաների փոփոխականները, որոնք տարբերվում են և՛ մեկնաբանութամբ, և՛ բովանդակութամբ, և՛ լեզվով:

Որքան էլ կրոնա-քարոյական մեկնաբանութամբ Այգեցին ծանրաբեռնել է առակը, այնուհանդերձ նրա ստեղծագործութունը Շախարհիկ ճարվեստ է և ոչ հողեր: Նա մեկն է այն գաղաթներից, որոնց վրայով է անցնում միջնադարյան հայ ընդգրային մշակույթի սահմանագիծը: Եթե Այգեցու առականերն ապատեսք քարոյախոսական կցաններից, ապա կիսան զվարթ և սրամիտ պատմութունների, երբեմն ուղղված հենց եկեղեցու և Ֆեոդալների գեմ,— առականեր և իմաստուն մանրավեպեր, որ սիրելի էին միջնադարյան հայ վաճառականին և գյուղացուն: Նպատակ դնելով քարոզել հայ եկեղեցու հալատու հանդանակը քաղաքներում և գյուղերում, ամբողջեցու համար այդ կեղեցու հիմքերը, որոնց խարխուլում էր միջնադարյան քաղաքը,— Այգեցին քարոզը Լատելի գարձնելու համար լիա-

բուն օգտվել է ժամանակի ժողովրդական բանաստեղծությունից, վերամշակել է այն ըստ իր նպատակադրման և այսպիսով գրի են առնվել բազմաթիվ անդիբ գրույցներ: Առակախառն քարոզների հեա ղբականության մեջ խուժել է առակը և մանրավեպը, իսկ վերջիններս իրենց հետ բերել են նաև ժողովրդական լեզու և ոճ, և այսպիսով ոկսել է ձևավորվել միջնադարյան հայ «աշխարհիկ» արձակը:

Մակախ այդ արձակը հետագա դարերում չծավալվեց և չդարձավ ամբողջական գործ: Այսպես շամբողջացավ նաև հայ ժողովրդական վեպը, ինչպես և միջնադարյան հայ բանաստեղծության առանձին դոհարները չկապեցին ոչ թագ, ոչ պսակ:

Բայց և այնպես վարդան Այդեցին կառուցող վարպետներից է այն հիմքի, որի վրա պետք է բարձրանար միջնադարյան հայ արձակի շենքը: Եվ եթե հետագա բանարբի և խավարայնիք ժամանակներում այդ շենքը չբարձրացավ, այնուհանդերձ հիմքը վկայում է կառուցողներին, նաև վարդան Այդեցու, մեծ վարպետությունը:

Մի բանի խոսք՝ այս հրատարակության մասին:

Արդեն սասցիներ, որ 1688 թ. Ամստերդամում լույս է տեսել առակների առաջին ժողովածուն «Աղվեսաղիբը» վերնազրոյ: Երկրորդ անգամ տպագրվել է Մարտելում 1676-ին, երրորդը 1683 թ., դարձյալ Մարտելում և չորրորդը Լիվոնայում՝ 1698 թվին: Այսպիսով 17-րդ դարի երկրորդ կեսին չորս անգամ տպագրվել են առակների ժողովածուները: Ըստ ն. Մառի բացատրության, առաջին հրատարակիչը ծանոթ լինելով եվրոպական լեզուներին, կամեցել է առակների ժողովածուն նմանեցնել այդ աղվերի:

նույնանուն գրքերին, որինակ «Fuchsbuch»-ին և անվանել է «Աղվեսաղիբը»: Ի դեպ ն. Մառը խորին ուսումնասիրությամբ հաստատել է, որ արարական «Աղվեսաղիբը» թարգմանված է հայերենից, վարդանի առակների մի որևէ ժողովածուից:

Ի նկատի ունենալով, որ այս հրատարակության մեջ կան և բուն վարդան Այդեցու առակներ, ինչպես և այլ առակներ և մանրավեպեր, որ կան վարդանի կամ վարդանին վերագրած առակների ձեռագիր և տպագիր ժողովածուների մեջ,—մենք ևս պահպանեցինք արդեն ընդունված «Աղվեսաղիբը» անունը:

Տեքստի համար հիմք ընդունելով ն. Մառի կոհաստոր աշխատությունը՝ «Ժողովածոյք առակաց վարդանայ», որն անհման կոթող է միջնադարյան հայ արձակի,—մենք հաճախ դերագտել ենք առակների այն վարիանտները, որոնք չգտնեիք հայերեն են և բովանդակությամբ ավելի հարուստ Առակների մեկնությունները շենք բերել՝ համարելով հնացած ավելորդաբանություն: Համարյա անփոփոխ են վերնագրերը: Բացի այդ աշխատել ենք ըստ կարեւորյան պահել բնագրի ոճը, միաժամանակ նպատակ դնելով նյութը մատչելի դարձնել ընթերցողների լայն խավերին:

ՎԱՐՈՒՆ ԱՅԳԵՆԻ

ԱՂՎԵՍԱԳԻՐԸ

2 Ազգեսպիտակ



ԳԱՐՈՒ ՀԱՇԻՎ



Ի մարդ կալից զը-
րաստով զարի էր
կրում տուն: Եվ
քուռակը մոր հետ
գնում էր և հետ
դառնում: Իսկ տա-
նը, ուր կրում էին
զարին, մի խողկար
կապած, որին գիրացնում էին: Եվ զարին ան-
պակաս էր նրանից, որպեսզի ուտի և զիրանա,
եվ քուռակն ասաց մորը. «Ինչո՞ւ համար այն
խողն առանց աշխատանքի ուտում է զարին, որ
մենք կրում ենք մեծ դժվարությամբ և մեզ որ

չարչարվում ենք, օրը մի անգամ են գարի տալիս: Մայրն ասաց. «Եսիր, սրդյակ և մի շարաթ ևս համբերիր և ապա ես քեզ պատասխան կտամ և քո աչքով կտեսնես»:

Եվ մի շարաթ հետս էջը և քուռակը բերով տուն էին գալիս. քուռակը մորից առաջ էր գնում և լսեց խոնչոցի անագին ձայն, որովհետև խոզը մորթում էին: Եվ խրանեց քուռակը և հետ փախավ դեպի մայրը և մայրն ասաց. «Ի՞նչ եղավ քեզ, սրդյակ, որ սոսկում ես. մի վախենար խոզից, որովհետև նրանից գարու հաշիֆն են ուզում»:

Եվ գարձյալ հկան կալը՝ գարի կրելու Եվ երբ բարձած վերագարձան տուն, քուռակը բարձրացնելով ոտքի սմբակը, մորն ասաց. «Ո՞վ մայր, տես թե ոտքիս չի՞ փակչել գարու մի հատ, որ ինձնից էլ հաշիվ ուզեն, ինչպես խոզից»:

ԱՅՐԻ ԿԻՆ ԵՎ ՈՐԳԻ



Ի այրի կին ուներ տառը այժ և մի որդի: Եվ ամեն օր որդին այծեքը տանում էր արտ և մայրն ամեն օր մի շերեփ շուր էր լքցնում կաթի մեջ և փոխ էր տալիս հարեվաններին: Եվ որդին մորն ասաց, թե ինչո՞ւ ես այգպես շուր լքնում կաթի մեջ և փոխ տալիս հարեվաններին: Մայրն ասաց. «Որդի, մեր կաթը քիչ է, նրա համար եմ անում, որ մեր կաթը մի քիչ ավելի լինի, որ ձմեռը մեզ թացան լինի»:

Իսկ մի օր, երբ որդին այծերին արոտ էր տարել: Երկնքում ծնվեց մի փոքր ամպ և անձրև եկավ և հեղեղ եկավ և այծերը սրբեց լցրեց դեառ: Որդին տուն եկավ արևով և դատարկ և ձեռքին միայն փայտը: Մայրն ասաց. «Որդի ձեռքն այծերը և ինչ՞նչ դու այսօր արևով եկար»: Որդին ասաց. «Մայրիկ, այն մի շերեփ ջուրը, որ խառնում էիր կաթին և փոխ տալիս հարևաններին, հավաքվեց և հեղեղ դարձավ և եկավ մեր այծերը տարավ լցրեց դեառ»:

Մ Ի Ա Յ Ն Ա Կ Յ Ա Յ Ե Վ Գ Ա Մ Փ Ռ Շ Ա Ի Ն



Ի միայնակյաց բնակվում էր մի գյուղի մոտ և գյուղում նա սիրեց մի աղջիկ և բազում ժամանակ նրա հետ շնանում էր պտենդուխյամբ: Եվ գյուղի տանուտերն ունեք մի գամփու շուն, որ

խիստ պահող շուն էր և ամբողջ գյուղը պահում էր: Մի գիշեր միայնակյացն եկավ, որ շնանա այն կնոջ հետ և գյուղի եզրին նրան հանդիպեց տանուտերի շունը և գամփուեց նրա վրա և նրան կծեց և արյունը ճապաղ արեց և

շատ վերքեր արեց և նեղելով նրան քշեց: Եվ միայնակյացը լալով և արյունաթաթախ մտով խուցը և գուռը փակեց, զղջաց և չոքեց՝ աղօթքի, լաց եղավ և կուրծքը ծեծելով տուաց: «Առտված, բազում ժամանակ է, որ շնացա և չվախեցա քո քառաստանից և ոչ գառն դժոխքից վարճուրեցի, բայց այս գիշեր վարճուրեցի մի գամփս շնից և չկարողացա շնություն անել»:

ԱՅՄԵՐ ԵՎ ԳԱՅԼԵՐ



ԱՎԱՔՎԵՑԻՆ այժերը միասին և պատգամ ու զարկեցին գայլերի ազգին և ասացին, թե ինչու մեր մեջ լինի անհաշտ խրուովություն, այլ ոչ թե խաղաղություն:

Եվ հովաքվեցին գայլերը և ուրախացան մեծ ուրախությամբ և նամակով պատգամ ուղարկեցին այժերի ազգին, նաև անթիվ ընծաներ: Եվ գրեցին այժերին. «Լսեցինք ձեր բարի խորհուրդը և գոհանամք ասածուց, որովհետև մեզ

համար մեծ խնդություն է և խաղաղություն. նաև իմացնում ենք ձերգ իմաստության, որ հովիֆու ռ շներն են պատճառ և սկիզբ մեր խոռվության և կովի. և եթե նրանց վերացնենք մեջտեղից, շուտով լինի խաղաղություն»։ Եվ այս լսեցին աշները, հաստատեցին և ասացին. «Իրավացի են գայլերը, որ մեզ սպանում են, սրովհետև շները և հովիվը նրանց հալածում են մեզնից»։ Եվ աշները վաարեցին շներին և հովիվին և երգվեցին, որ հարյուր տարի մնան անխախտելի սիրով։ Եվ աշները ցրվեցին լեռները և դաշտերը և սկսեցին ուրախ լինել և ցնծալ և խաղալ, որովհետև արածում էին լավ արոտներում, ուսում էին համեղ խոտեր, խմում էին պաղ ջրեր և խնդում էին և վաղվում էին, փառք առլով, որ հասան բարի ժպմանակի։

Եվ գայլերը համբերեցին հարյուր օր, ապա հավաքվեցին դաս-դաս ընկան աշների վրա և կերան։


Ե Ր Կ Ո Ւ Ն Կ Ա Ր Ի Չ



Ի սնն թագավոր շէնեց գեղեցիկ դարբաս և կամեցավ գարգարել այնպիսի նկարներով, սրոնց նման ոչ մի տեղ չէր եղել։ Եվ ընտրեց կրկու նկարիչներ և մեկին ավեց մի պատը, մյուսին՝ մյուս պատը և նրանց միջև վարագույր քաշեց։ Եվ երբ նկարիչներն ավարտեցին իրենց գործը, թագավորը եկավ, որ տեսնի նրանց գործը և տեսավ, որ մեկը նկարել էր գեղեցիկ պատկեր և շատ հավանեց։ Իսկ մյուսը

բնավ ոչինչ չէր նկարել. նա պատր շատ գեղեցիկ սարքել էր և կոկել հայելուց ավելի լավ: Երբ թագավորը տեսավ, որ չէր նկարել, այլ միայն կոկել էր, վարմացավ և ասավ. «Դու թնչ ևս արել»: Նա ասաց. «Ես ցույց կտամ իմ գործը»: Եվ ապա վեր քաշեց միջի վարագույրը և երբ լույսը ծագեց և լուսավորեց կոկած պատր, այն ժամանակ մթնեց նկարագրով պատր, որովհետև հայելու մեջ երևում էին այն բոլոր պատկերները, որ նկարված էին մյուս պատի վրա: Եվ թագավորն ասաց. «Այս մյուսից գեղեցիկ է»:

ԱՌՅՈՒՄ ԵՎ ԱՂՎԵՍ



Ի տույուծ կորյուն ծնեց և հավաքվեցին կենդանիները կորյունին տեսնելու և ուրախանալու: Աղվեսն եկավ և հանդեսի ժամանակ, բազմության մեջ առյուծին նա-

խտեց բարձրաձայն և անարգեց, թե այդ է քո դորությունը, որ ծնում ես միայն մի կորյուն և ոչ բազմաթիվ: Առյուծը հանդարտաբար պատասխանեց և ասաց. «Այո, ես ծնում եմ մի կորյուն, բայց առյուծ եմ ծնում և ոչ քեզ նման աղվես»:

ԻՄԱՍՏՈՒՆ ԴԱՏԱՎՈՐ



Ի մարդ ունեղ
չար կին և կինը
կովեց նրա հետ
և ասաց. «Կար-
ծում ես թե քո
երեք որդիները
քեզնից են: Մե-
կըն է քեզնից,
իսկ երկուսը՝ բիճ

են»: Եվ նա հարցրեց. թե ո՞րն է իմը և կինը
չասաց. Եվ երբ հայրը մեռնում էր ասաց. «Իմ
ամբողջ կայքը թող լինի իմ հարազատ որդուն»: Եվ
եղբայրները կովում էին իրար հետ. մեկն
ասում էր. թե ես եմ հարազատ որդին և մյու-

որ՝ թե ես եմ: Եվ գնացին մի իմաստուն գա-
տավորի մոտ: Եվ գատավորը հրամայեց նրանց
հորը հանել գերեզմանից և նետ արձակել նրա
վրա: Ով հորը զարկեր նետով և նետը ծակեր հոր
մարմինը, նա էր հարազատ որդին: Եվ երկու
որդիները զարկեցին հորը, իսկ ճշմարիտ որդին
դանակը քաշեց, որ սպանի եղբայրներին և լաց
եղավ գառն արտասունքով և թաղեց հոր մար-
մինը:

Եվ իմացան, որ նա էր հարազատ որդին և
նրան տվին հայրենի կայքը:

ԱՌՅՈՒՄ ԵՎ ԿԱՅԼ ԵՎ ԱՂՎԵՍ



ՌՅՈՒՄՆ և գայլն և աղվեսն եզրայր հզան և որսի ելան և դառն մի խոյ մի ոչխար, որ է մաքի և մի գառ: Ճաշի մամին առյուծն ասաց գայլին, թե բաժանիր

մեր մեջ այդ որոր: Եվ գայլն ասաց. «Ով թագավոր, աստված արդեն բաժանել է խոյը քեմաքին ինձ և դառն աղվեսին»: Եվ առյուծն բարկանալով, աստակ զարկեց գայլի ծնոտին և դուրս թռան գայլի աչքերը և նա նստեց և դառն լաց

հղալ: Եվ գարձյալ ասաց առյուծն աղվեսին, թե բաժանիր ոչխարները մեր մեջ: Եվ աղվեսն ասաց. «Ով թագավոր, աստված արդեն բաժանել է խոյը քեզ՝ ճաշին, մաքին քեզ՝ հրամենքին և գառը քեզ՝ ընթրիքին»: Եվ առյուծն ասաց. «Ով խորամանկ աղվես, քեզ մի սովորեցրեց այդպես ճիշտ բաժանել»: Եվ աղվեսն ասաց. «Ինձ սովորեցրին գայլի աչքերը, որ դուրս թռան»:

Handwritten:
13594

БИБЛИОТЕКА
Стенанаг. ерсевог. ф. 2000
АПИ имени В. И. Ленина

В. И. Ленин адына
АПИ КИТАПХАНАСЫ
БИБЛИОТЕКА АПИ

Small handwritten text: Երկրորդ

Գ Ի Ն Ի



Ի թագավոր մի որդի ուներ և հրաման արեց նախկներին, թե ամեն օր ձեզնից մեկը թող տանի իմ որդուն և պատվի: Եվ տանում էին:

Եվ մի օր մի նախկ պատվելու էր տարել թագավորի որդուն և երեկոյան նրան տարավ թագավորի տունը և ինքը գնաց: Թագավորի տղան խիստ գինով էր և հարբած դուրս եկավ, ընկավ ազրանոցը և մեռավ: Եվ թագավորը հրամայեց, թե իմ իշխա-


նության ներքո ինչքան այգի կա՝ փակեք և կարանները կտորատեք: Եվ այդպես արին:

Եվ մի այրի կին մի որդի ուներ և այրի կինը պահեց յուր հնձանը և գինին և ամեն առավոտ և երեկո հացի վրա երկու թաս գինի էր տալիս որդուն: Եվ այրի կնոջ որդին մի գիշեր դուրս եկավ, սպանեց թագավորի առյուծին և թագավորն առավոտյան հրամայեց, թե ով որ սպանել է իմ առյուծին, եթե զա և ինձ պատմի՝ նրան շեմ պատժի: Եվ եկան այրի կինը և նրա որդին: Թագավորը նրան հարցրեց, թե ինչպես սպանեցիր առյուծին: Եվ նա ասաց, թե գիշերով դուրս եկա, հանդիպեցի առյուծին և սպանեցի: Եվ մայրն ասաց, թե նրան գինով է սնուցել և պատմեց, թե ինչպես է գինով սնուցել:

Եվ թագավորը հրաման արձակեց, թե այգի տնկեք և գինին այնպես խմեք, որ առյուծ սպանեք և ոչ թե ազրանոցում մեռնեք:

Եվ նա առաց. «Մ՛ի իմ սրգիներ, ձեր առաջ
սուտ չեմ երգվի և ճշմարիտ կանոն, որ առջևի
ձայնի գորությունից բնավ չեմ կարող իմանալ,
թե ուրիշ ինչ ճայթյուն է ելնում իմ հետևի
կողմից»:

Ի Մ Ա Ս Տ ՈՒ Ն Ա Վ Ա Գ Է Շ



ԱՏ էշեր գնում էին արքունի
գործով և նրանց մեջ կար մի
ավագ էջ՝ իմաստուն և մեծ, քան
մյուսները: Եվ ամենքը նրան
պատվում էին, որպես հայր և
առաջնորդ: Եվ ահա
բարձրանում էին մի
սար և նա խառանչեց

և գոռաց սաստիկ ահագին և հետևի կողմից մե-
ծամեծ ճայթյուն արձակեց: «Մ՛ի պատվական
հայր, ըս առջևի ձայնից բոլորս ունենք, իսկ
ի՞նչ էր այն ահագին ճայթյունը, որ ըս հետևի
կողմից ելավ. աղաչում ենք, մաս մեզ»:

Մ Ի Ա Մ Ի Տ Գ Ո Ղ Ե Ր



ԲԱՌԻ գող բարձրացան մի մեծատան կտուր և կամեցան երգով վայր իջնել և գողություն անել: Եվ լուսնկա էր: Եվ մեծատուն մարդն իմացավ, որ գողերը երգիկի մոտ են: Եվ կինը մարդուն առաց, թե այս ամեն գանձերը և ոսկին

և կերպասը քեզ որտեղից են: Եվ մեծատուն մարդն առաց.

«Գնում էի գողության, մեծատուն մարդկանց երգիկով իջնում էի և լուսնկա էր, ինչպես այժմ և լուսնի շողերը երգիկից ներս էին ընկնում,

ինչպես այժմ և ես գրկում էի շողերի սյունը և վայր էի իջնում և այնպիսի մի բան էի ասում, որ ինչքան գեղեցիկ կերպաս կար այդ տանը, երևում էր ինձ և կապում էի լուսնի շողերին և վեր բարձրանում: Եվ այս ամենն այդպես եմ վաստակել:

Երբ գողերն այդ բանը լսեցին, խիստ ուրախացան և հավատացին այդ ցնորամիտ բանին և լուսնի շողերը գրկելով երգից վայր ընկան և ջարդվեցին:



Ի թագավոր զբոսան-
քի ելալ շրջելու լեռ-
ներում և հովիտնե-
րում: Եվ տեսավ, որ
մեծամեծ ծառեր կա-
յին կոտրուված և փը-
շքրված և միայն մի
եղեգ կար՝ կանգուն
անարատ: Եվ թագա-
վորն ասաց. «Ո՛վ ե-
ղեգ, ասա ինձ, թե ինչ-

պես հաստատուն ես մնացել, երբ մեծամեծ ծառե-
րը փշրվել են»: Եվ եղեգն ասաց. «Ո՛վ թագավոր,
երբ սաստիկ հողմ բարձրացավ, ծառերը հպար-
տությամբ հակառակ կանգնեցին հողմի դեմ և
հողմը նրանց փշրեց. իսկ ես խռնարնվեցի հողմի
կամքով և անա կանգուն եմ»:



Ի իշխան կար խիստ
չար և անիրավ: Եվ
նույն քաղաքում ապ-
րում էր մի այրի կին
և իշխանը հարկ պա-
հանջելով նեղում էր
նրան և այրի կինն
աղոթում էր, որ իշ-
խանն ունենա խաղաղ
ու երկար կյանք: Գը-

նացին, ասացին իշխանին, թե քո չարության
համար աղոթում է այրին: Եվ իշխանը եկավ և
ասաց. «Ես քեզ բարիք չեմ արել, ո՞վ կին, դու
ինձ համար ինչ՞ես ես աղոթում»:


Այլի կինն ասաց. «Քո հայրը վատ մարդ էր. ես անիծեցի և նա մեռավ: Դու նստեցիր նրա տեղը՝ ավելի խիստ չար: Եվ այժմ վախենում եմ, որ մեռնես և քո որդին քեզնից ավելի չար լինի»:

Ի Մ Ա Ս Ո Ւ Ն Զ Ի Ն Վ Ո Ր



Ի ոմն իմաստուն զինվոր պատերազմ էր գնում և նա երկու ոտքով կազ էր: Եվ զինվորներից մեկը նրան ասաց. «Ով ոգորմելի, ուր ես գնում: Քեզ իսկույն կսպանեն, որովհետև վախչել չես կարող»: Եվ նա ասաց. «Ով անմիտ, ես չեմ գնում պատերազմ՝ վախչելու, այլ կանգնելու, և կովելու և հաղթելու»:

ԹԱԳԱՎՈՐ ԵՎ ՕՋ



ԱՐ մի թագավոր
և ուներ նա մի սի-
րելի օձ, որ նրան
ամեն օր բերում
էր մի կարմիր դա-
հեկան: Եվ թագա-
վորն ունեցավ մի
մանուկ, որին սը-
նուցում էր գանձի
վրա և օձը նետում
էր մանկան պարա-
նոցով և այդպես

խաղում էին օձն ու մանուկը: Եվ երբ մանուկը
մեծացավ, մի անգամ խազի ժամանակ սուրբ
հանեց և կտրեց օձի պոչը և գետին դրեց: Եվ
գայրացավ օձը. թույնով զարկեց մանուկին և

մանուկը խկույն մեռավ և օձը գնաց օտար եր-
կիր: Եվ երբ թագավորը եկավ և մանուկին օձի
թույնից սևացած և մեռած տեսավ և օձի պոչը
գետնին բնկած, իմացավ, որ յուր մանուկն է
թրով կտրել օձի պոչը: Եվ սգաց սրբուն, տա-
րավ թագեց գերեզմանում:

Եվ անցավ մի տո ժամանակ և թագավորը
խնդրանքներ ուղարկեց այն օձի մաս և ասաց.
«Գիտեմ, որ առաջ իմ որդին է ծուռթյուն արել:
նա կտրել է քս պոչը, ապա դու կծել ես նրան:
Ինչ որ եղավ՝ եզավ և իզուր դնացիր: Արի և
մենք կլինենք առաջվա նման իրար սիրելի և
միասին կապրենք»: Իսկ օձը պատասխան տվեց
և ասաց. «Այդպես չէ. քանի որ ես պիտի նայեմ
իմ պոչի վրա, իսկ դու քս որդու գերեզմանին,
ուրեմն մեր միջև թշնամությունը չի վերանա:
Լավն այն է, որ դու և ես իրարից հեռանանք,
սրպեսզի այլ ուրիշ մեծագույն շարիք չծնվի
մեր մեջ»:

ԱՌՅՈՒԾ ԵՎ ԱՂՎԵՍ ԵՎ ԱՐՋ



ՌՅՈՒԾՆ հիվանդա-
ցավ և ամեն կեն-
դանիները եկան
նրան տեսության.
միայն աղվեսն ու-
շացավ: Արջը չու-
րախոսեց նրան և
աղվեսն դռնամտից
լսեց և ներս բնկ-
նելով թա-
վայվեց ա-
ռյուծի ա-

ռաջ: Առյուծն ասաց աղվեսին. «Բարի ժամի չե-
կար դարձելի, ասա ինձ, ինչո՞ւ ուշացար»: Աղ-
վեսն ասաց. «Մի բարկանար, բարի թագավոր,
երգվում եմ քո Ղլխով, որ քո ասողջության հա-
մար այցելեցի շատ բժշկապետների և մեծ չար-

չարանք քաշեցի, բայց իմացա դեղը ք՞ բժշը՝
կության»: Եվ առյուծն ասաց. «Բարի եկար,
իմաստուն կենդանի, ինչն է այդ դեղը»: Աղվեսն
ասաց. «Սխառ պիտանի է և դյուրին. բժշկա-
պետներն ասացին, թե կենդանի հանեք արջի
մորթին և տաք-տաք գցեք առյուծի վրա և իս-
կույն մորթին ցավը կհանի հիվանդից»: Եվ առ-
յուծը հրամայեց. արջին բռնեցին և սկսեցին
հանել մորթին: Իսկ նա վայում էր և արձակում
մեծամեծ ոռնոց:

Եվ աղվեսն ասաց. «Այդ ամենը քեզ և նրան,
ով արքունիք մտնելով կհարախոտի մեկին»:

ԿԱԹՄԵՂՈՒ ՊԱՏՃԱՌ ՊԱՏԵՐԱԶՄԻ



Ի մարդ խանութ
 ուներ և մեզր էր
 ծախում և մեղրից
 մի կաթ կաթեց
 գետնին և մի պի-
 ծակ նստեց կաթի
 վրա և կատուն վա-
 զեց և պիծակին ա-
 ոավ և նրանից հե-

տո շունը վազեց և կատվին առավ և խանութի
 տերը շանը զարկեց և սպանեց: Եվ այն գյուղին
 դրացի մի գյուղ կար և շունն այդ գյուղից էր:
 Երբ շան տերը իմացավ, թե խանութպանն ըս-
 պանել է յուր շանը, այն ժամանակ եկավ և ըս-


պանեց խանութպանին: Հետո երկու կողմից վեր
 կացան գյուղացիք և միմյանց հետ պատերազմ
 արին և նրանց միջև կոտորած եղավ և երկու
 կողմից կենդանի մնաց մի մարդ՝ մի կաթ մեղ-
 րի համար:



Ե իմաստուն և ազ-
քատ մարդ ուներ
ծույլ որդիներ:
Մահվան ժամին
նա կանչեց որդի-
ներին և ասաց.
«Ով զավակներ, իմ
նախնիները շատ
գանձ են թաղել
մեր այգում և ես

ձեզ ցույց չեմ տա նրա աեղը: Այդ գանձը կգտնի
նա, ով շատ աշխատի և խոր փորի: Եվ հոր մա-
հից հետո որդիներն սկսեցին աշխատել մեծ եռան-
գով և խորագույն էին վարում, որովհետև յուրա-
քանչյուրն աշխատում էր, որ ինքն գտնի գանձը:

Եվ այդին սկսեց աճել և զորանալ և առատ բերք
տվեց և նրանց հարստացրեց գանձերով:



ԻՂՏԸ և գայլը և
աղվեսը եղբայր ե-
ղան և ճանապարհ
ընկան և ճանապար-
հին գտան մի բլիթ

հաց և միմյանց ասացին, թե ով ավագ է, թող
նա ուտի: Եվ սկսեցին ասել իրենց տարիքը:
Աղվեսն ասաց. «Ես այն աղվեսն եմ, որի անու-
նը Աղամբ դրեց: Գայլն ասաց. «Ես այն գայլն
եմ, որին Նոյը տապանն առավ: Եվ ուղտը տես-
նելով, որ նրանք իրենից ավագ դուրս եկան և

հացը պիտի առնեն, հացը բերանն առաւ
բարձրացնելով ասաց. «Միթէ ես երեկվա տղան
եմ, որ այսչափ մեծացրել եմ իմ սրունքները»:

Եվ սկսեց հացն ուտել: Իսկ ազվեսը և գայլը
ցատկելով նրա շուրջը, ոչինչ չկարողացան անել
և փախան:

ԿՌՈՒՆԿ ԹԱԳԱՎՈՐ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԷՇ



ԱՎԱՔՎԵՑԻՆ թռչունները և
ասացին, թե որի ձայնը զո-
րավոր է, նրան մեզ թա-
ղավոր ցնենք, որպեսզի պա-
տերազմի ժամին կանչի
մեզ: Եվ կռունկը եր-
կինք բարձրացավ և
գոչեց. նրան հավանե-
ցին թռչունները և
օձեցին թաղավոր: Է-

շը եկավ և ասաց. «Այ, եթե ինձ ոտի տեղ անեիք,
որ նրա փոխարեն ես բարձրանայի, դուք կլսեիք,
թե ում ձայնն է զորավոր»:

Ե Ձ Ն Ե Վ Ձ Ի



ՁԸ և ձին խոսա-
ցին միմյանց հետ:
Եզն սասաց. «Դու
սիկ ես կամ ինչի՞
պետք ես»: Ձին ա-
սաց. «Ես ձի եմ և
ինձ թագավորները
և իշխանները և
պարոնները զար-
դարում են ոսկով
և արծաթով և բազ-
մում են ինձ վրա»:
Եզն սասաց. «Աս-

բողջ աշխարհի բարեկեցությունն կմ ես, որով-
հետև ես եմ վաստակում և չարչարվում և հող-

նում և ապա դու և քո թագավորն ուսում եք:
Եվ բոլոր մարդիկ ուսում են իմ վաստակը և
եթե չվաստակեմ, դու և քո թագավորն իսկույն
կմեռնեք: Եվ դու երախտամոտ մի լինիր»:

ՀԻՄԱՐ ԵՎ ՋՄԵՐՈՒԿ




Ի հիմար և միամիտ
մարդ ունեւ մի
դանեկան և առնե-
լով դանեկանը գը-
նաց քաղաք մի էշ
գնելու և շրջեց քա-
ղաքում և շուկա-
յում և չգտավ մի
դանեկանի էշ, ապա

կրկին եկավ շուկա և տեսավ մի մեծ ձմերուկ և
հիացմամբ հարցրեց. «Այս թնչ է»: Եվ վաճա-
ռականներն խնայան, որ նա հիմար է և ասա-
ցին, թե հնգու էշի ձու է և կհանի հնգու մեծ
էշ: Եվ սրբախանուով մարդը, ավեց դանեկանը

և առավ հնգու էշի ձուն: Եվ վաճառականները
նրան պատվիրեցին, թե ձեռքից զգուշը տար,
թե չէ կկտորվի և էշը միջից կփախչի: Եվ մե-
րուկը ձեռքին մարդն սկսեց գնալ զառիպայր ճա-
նապարհով և նրա ստաբը սայթաքեց, ձմերուկը
մեջ և անատից մի նապաստակ վազեց և սկսեց
փախչել, իսկ մարդը կարծեց, թե ձուն կտորվել
է և անա էշը ելել և փախչում է: Եվ հետևից վա-
զելով կանչում էր նապաստակին և ձայն էր տա-
լիս. «Այ հնգու էշ... վե՛յ ինձ, մի փախչիր-
քուսի, քուսի խնայիր ինձ և վերադարձիր»:


ԷՇԻՆ ՔՈՌ ԾՆՎԵՅ



Շին ավետիս ավին՝
 թե ցնծա և ուրախ
 եղիր և մեծ ընծա
 պարգևիր, սրովհետև
 քեզ թոռ ծնվեց: Եվ
 էշն տաաց. «Վայ ինձ
 բարեկամներ, եթե հա-

րյուր թոռ էլ ծնվի, չեն թեթևացնի ծանրու-
 թյունն իմ մեջքի բեռան»:

ԱՂՔԱՏ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆ




Ի աղքատ մի գյուղ
 եկավ և մտավ գյու-
 ղի եկեղեցին, որ
 խարխուլ էր և անձ-
 րևակեղ: Եվ այն
 աղքատը անձրևա-
 թաց էր և քաղցած
 և հագել էր պա-
 տառասուն զգեստ

և դողում էր և հոգնել էր ճանապարհից: Եվ ներս
 մտավ քահանան, սկսեց ժամ ասել: Առավ ավե-
 տարանը և կարգաց այն էջը, ուր գրված էր, թի
 օտարական էի՝ ընդունեցիք ինձ, մերկ էի՝ հագ-
 ցրիք ինձ, քաղցած էի՝ կերակրեցիք ինձ, ծա-

րով էի՝ հագեցրիք ինձ: Այն աղքատը լսեց և ուրախացավ. «Այս ինձ համար է սագած և ահա շուտով կկատարեն իմ կամքը»: Իսկ քահանան ծամն արձակեց և գնաց տուն և աղքատին թողեց եկեղեցու մեջ և հոգ չտարավ նրա մասին: Եվ աղքատն ասաց. «Այն գիրն, որ կարգաց, նա սուտ էր»: Եվ առավ ավետարանը, վրան քար գթեց և սուգեց ջրի մեջ: Եվ քահանան եկեղեցի գալով ավետարանը չգտավ և աղքատին ասաց. «Ո՞ւր է ավետարանը»: Եվ աղքատն ասաց քահանային. «Ի՞նչ ես անում սուտ ավետարանը, և ես տարա ջուրը գցեցի»: Եվ քահանան բարկանալով սկսեց ձեռել աղքատին և աղքատն ասաց. «Ինչո՞ւ ես ձեռում ինձ, անիրավ. և թե հավատում ես, թե ավետարանն աստուծու ճշմարիտ խոսքն է, ապա ինչո՞ւ չես կատարում նրա կամքը: Որովհետև ես օտարական եմ և ինձ չեք ընդունում, մերկ եմ և ինձ չեք հագցնում, քաղցած եմ և չեք կերակրում ինձ, ծարավ եմ, շուր չեք տալիս: Միթե՞ աստված այդ բաների պակասությունն ունեւր և այդ ամենն իրեն համար ասաց»:

Հ Ա Յ Ր ՈՒ ՈՐԳԻ




Ի մտրդ աղջիկ առավ որդու համար և որդին ամուսնացավ աղջրկա հետ և երբ միավորվեց նրա հետ, շատ հիտցավ ամուսնության գործի վրա

և ուրախացավ և սկսեց հորը խրատել ամուսնության գործի մասին:

Եվ հայրն ասաց, «Ո՞վ որդյակի, ես ամուսնության գործով ծնեցի քեզ և այժմ դու ես խրատում ինձ»:

ՄԱՐԴ ԵՎ ԸՆԿՈՒՅՉ ԵՎ ՋՄԵՐՈՒԿ




Ի մարդ ընկույզի
 ծառի տակ ձմերուկ
 էր պանել: Եվ պը-
 տուղի ժամանակ
 եկավ տեսավ մե-
 ծամեծ ձմերուկնե-
 րը և ծառին նայեց,
 տեսավ, որ ընկույ-
 զը մանր էր: Մարդն

ասաց. «Տեր աստված, ինչ որ ստեղծել ես՝ ամե-
 նը կարգին է և մի բանի նման: Իսկ այս երկու
 պտուղը անկարգ են, բանի նման չեն»: Մարդն
 ասում էր, որ ընկույզի տեղ ձմերուկ պիտի լի-
 ներ ծառին և ընկույզը ձմերուկի թփի վրա:

Եվ նա պառկեց ծառի տակ և նայեց ծառին և
 հանկարծ մի ընկույզ պսկվեց ծառից և շատ պիճնո
 կպավ նրա ճակոթին և ճակատը պատռեց և ար-
 յունը ելավ: Եվ մարդը վեր կացավ տեղից և
 աղաղակեց. «Տեր աստված, ինչ որ ստեղծել ես,
 ամենը կարգին է և կատարյալ և ով չհավանի
 քո ստեղծածը, նրա ճակատը իմից վատ լինի,
 որովհետև ընկույզի տեղ ձմերուկ լինեք, ինչ
 պիտի ուղանեք»,

ԱՄԵՆԱՏԳԵՏ ՄԱՐԴԸ



Ի թագավոր կամե-
ցավաշտարակ շինել
և աշտարակը քանի
ցերեկը շինում էին,
գիշերը փուլ էր գա-
լիս: Եվ նա հավա-
քեց յուր գիտուն-
ներին և պատճառը
հարցրեց: Նրանք
ասացին. «Եթե կա-

մենում ես, որ այլևս չփլչի, դու գտիր մի տգետ
մարդ, որից ավելի տգետ մարդ չլինի և նրան
կենդանի դիր պատի մեջ և պատը թող շարեն. և
այլևս չի փլչի»: Եվ թագավորն ասաց. «Այդ բա-
նի ընտրությունը ևս դուք արեք և գտեք մի

տգետ մարդ, որին կենդանի թողեն պատի
մեջ»:

Եվ գիտունները նստեցին միասին որոշելու,
թե ինչ տեղ կարող են գտնել տգետ մարդ և
մեկն ասաց. «Ձյնորսն է տգետ, քանի որ նրա
առն ու տալը մարդու հետ չի, այլ ջրի և ձկնե-
րի»: Իսկ ոմանք ասացին. իշապանը, որ իշու
հետ է լինում և իր սղջ կյանքն անց է կացնում
գրաստի հետ, շրջելով լեռ և անտառ: Ոմանք ծո-
վարարին ասացին, իսկ ոմանք հովիին, որ
ամառ-ձմեռ ոչխարների հետ շրջում է լեռներում,
չի մտնում գյուղ կամ քաղաք: Եվ հավանու-
թյուն արին և կամեցան հովիին բերել:

Այն ժամանակ գիտուններից մի ոմն ասաց.
«Թե Վեր թագավորը մի հովիվ ունի, որ ծնվել
է սարում ոչխարների մեջ և սնվել է այնտեղ և
յուր կյանքում ոչ գյուղ է մտել, ոչ քաղաք»:
Եվ ուղարկեցին տաս ձիավոր, որպեսզի մար-
դուն բերեն: Եվ ձիավորները գնացին դտան
հովիին, որ կթում էր ոչխարը և ողջունելով
ասացին. «Թագավորը քեզ կանչում է»: Հովիվն
ասաց. «Ես իմ կյանքում ոչ քաղաք եմ գնացել
ոչ էլ գյուղ. ինձ ինչո՞ւ է կանչում»: Իսկ նրանք
խորամանկությամբ ասացին. «Նենք իմանում»:

Իսկ հովիվը պատգեց նրանց, գառ մորթեց և պանիր բերեց և ուրախացրեց նրանց և երգամար հարցրեց կանչելու պատճառը: Եվ նրանք ասացին, թե այս պատճառով է քեզ կանչում, որովհետև թագավորի գիտունները ասել են, որ մի տգետ մարդու պետք է դնել պատի մեջ սրպետի պատը շեն մնա:

Այն ժամանակ հովիվը ծիծաղեց և ասաց.

«Հիմարը և տգետն այն գիտուններն են, որ այդպիսի ընտրություն են արել: Եվ մի ոչխար բերելով ասաց. «Ես ձեզի ցույց կտամ իմ տգիտությունը: Եվ ասաց. «Այս ոչխարը երկու գառ ունի փորում, մինը էդ է, և մյուսը՝ որձ, մեկի գլուխը սև է և մյուսինը՝ սպիտակ»: Եվ ոչխարը մորթեց և գառները փորից հանեց և այնպես էր ինչպես ասաց: Եվ մի այլ ոչխար բերելով ասաց. «Այս ոչխարը մեկ գառ ունի փորում. մարմինը սև է, գլուխն սպիտակ և ինքը որձ»: Եվ մորթեցին տեսան այնպես: Եվ հովիվն ասաց. «Ոչխարի այս երկու հոտը, որ կա ձեր առաջ, ամենին գիտեմ, թե որն է ծնելու և որն է ստերջ և որն է որձ ծնելու և որը՝ էգ և որը սև կամ սպիտակ և որը սև ու սպիտակ պուտերով: Ձեր գիտունները կարճոգ են այդ իմանալ: Ձիավորներն

ասացին. «Ոչ ամենևին: Հովիվն ասաց. «Ուրեմըն իմացեք, որ ես չեմ այն հիմարն ու տգետը, որին դուք փնտրում եք: Իսկ եթե կամենաք, ես ցույց կտամ տգետ մարդուն: Թագավորը թող յուր նախիպին բռնի թալանի և ինչ ունի ամենն առնի և քաղաքի հրատարակում նրան կախի և շարաշար տանջի, որպեսզի բոլոր քաղաքացիները տեսնեն. ապա նախիպին թող տանեն թաքցնեն և առեն, թե նրան սպանեցին: Եվ երեք օր քաղաքում թող կանչեն, թե ինչ մարդ որ կգա և հանձն կտանի նախիպի գործը, նրա ամեն ապրանքն այդ մարդուն կտանք և նրան կնշանակենք թագավորի նախիպ: Այդ մարդը, որ կտեսնի այդ խաղաքը և կլսի ինչ որ արին նախիպի պիսին և առաջանալով կտաի թե ես եմ, ուզում եմ լինել նախիպ, այն մարդն է հիմար և տգետ, նրան բռնեցեք և կենդանի գրեք պատի մեջ, որպեսզի այլևս չփլչի և շեն մնա:»

Իսկ նրանք և կան և թագավորին պատմեցին և թագավորն արեց այնպես, ինչպես հովիվն ասել էր և մինչդեռ քաղաքում կանչում էին, թե ով գա և հանձն առնի նախիպի գործը և իշխանությունը, նա կտանա նրա ապրանքը և հողը, այն ժամանակ մոտ վազեց մի ջրմի և թոնի մարդ և

ասաց, թե ես հանձն կառնեմ այդ գործը: Եվ նրան հաջցրին, թե տես՞ր ինչ արին նայիպի գլխին: Նա ասաց. «Այո, տեսա»:

Եվ իսկույն ասան նրան և տարան, կենդանի գրին պատի մեջ և պատը հաստատուն մնաց:

ԱՂՎԵՍ ԵՎ ՈՐՍՈՐԴ



ԸՍՈՐԴԸ շնորով տա-
ռապում և նեղում
էր աղվեսին: Եվ աղ-
վեսը դարձավ և
ասաց. «Աղաչում
եմ քեզ, ասա թե
ինչո՞ւ համար ես
ինձ նեղում»: Եվ
որսորդն ասաց.
«Քրպեսզի հանեմ
քո մորթին»:

Աղվեսը կանգնեց և ասաց. «Տե՛ր աստված,
փառք քեզ, որ սրա ուղածն այս է: Իսկ ես կար-
ծում էի, թե ինձ ուզում է նշանակել մեր գա-
վառի հավարած կամ թռչնոցի վանահայր»:

ԻՇԵԱՆԱՎՈՐ ԵՎ ԻՄԱՍՏՈՒՆ




ԱՐ մի աշխարհակալ իշխանավոր և նա ունեւր մի խիստ գեղեցիկ տղա: Եվ իշխանավորն ասաց. թե գեղեցիկ աղջիկ կանեմ, որ կին չինի իմ որդուն և ունենամ գեղեցիկ թոռներ՝ ժառանգ իմ գահի: Եվ գնաց բերեց մի գեղեցիկ հարս և դեռ թու չէր ունեցել

երբ որդին մեռավ և հարսը մնաց: Եվ ինքը կամեցավ հարսին առնել և հարցրեց իմաստուններին, թե «Կ՛մ իրավունք» և նրանք ասացին, թե «չկա իրավունք, որ հայրն առնի հարսին»: Եվ չկամեցավ լսել նրանց և դտավ մի այլ իմաստուն,

որ նրա սիրելին էր, և այդ իմաստունն ասաց իշխանավորին. «Աշխարհում յոթանասուն երկու ազգ կա և նրանցից ոչ մեկին չի հասնում այդ, բայց քեզ կհասնի»: Եվ իշխանավորն ասաց, թե «Ինչու աշխարհի յոթանասուն երկու ազգին չի հասնում այդ, իսկ իրեն կհասնի»: Եվ իմաստունն ասաց. «Վախենում եմ պատճառն ասել որովհետե կապանես ինձ»: Եվ նա երգվեց չպատճել նրան, եթե պատճառն տաի:

Այն ժամանակ իմաստունն ասաց. «Որովհետե դու ամեն ազգից դուրս ես և քո վրա չկա իշխանութուն և ինչ կամենաս կարող ես անել»:

Ա Ղ Վ Ե Ս Ե Վ Թ Ղ Թ Ա Տ Ա Ր Գ Ա Յ Լ




ՂՎԵՍՐ մի գը-
րած թուղթ գտավ
և տարավ գայլին և
ասաց. «Այսչափ
ժամանակ աշխա-
տեցի և բարեխոս
մարդիկ մեջ գցե-
ցի և իշխանից քեզ
համար թուղթ հա-

նեցի, որ ամեն գյուղ՝ ուր հանդիպես, քեզ պի-
տա մի ոչխար: Եվ այդպես խարեց գայլին և
միասին գնացին մի գյուղ և ազվեսը նստեց
բլուրի վրա և թուղթը տվեց գայլին: Երբ գայ-
լը գյուղի մեջ մտավ, վրա թափվեցին շները և


մարդիկ, նրան գզեցին և գանահարեցին: Եվ
արյունաթաթախ գայլը հագիվ տզատվելով հա-
սավ ազվեսին: Եվ ազվեսն ասաց, «Ինչո՞ւ թուղ-
թը ցույց չտվիր»:

Եվ գայլն ասաց, «Ցույց տվի, բայց դյուրում
հազար շուն կար, որ դիր չգիտեր»:



Ի այրի կին ուներ
մի կով և նրա խորթ
որդին ուներ մի
էշ: Եվ խորթ որ-
դին գողանում էր
կովի կերը տալիս
էշին: Եվ այրի կինն
ասածուն աղաչեց,
որ աստված էշին

մեացնի: Բայց կովը մեռավ և այրին լաց եղավ
և ասաց. «Ով աստված, միթե՞ չկարեցար էջը
կովից տարբերել»:




Ի երիտասարդ ուխ-
տել էր հարամ բան
ամենին շուտել և
մի օր նա գնաց
գետի եզրը և տե-
սավ, որ ջուրը մի
խնձոր էր բերում:
Երիտասարդն ա-
ռավ խնձորը կի-
րավ անոթի, ապա

միտն ընկավ իր ուխտն և խզճմտանքով գնաց
գետն ի վեր, գտավ մի այգի և խմացավ, որ
խնձորն այդ այգուց էր: Երիտասարդն ասաց այ-
գետիրոջ. «Ողորմի՛ր ինձ և առ խնձորի գինը
կամ հալալ արա, որովհետև ես հարամ բան ամե-

Կեանքն շեմ կերելու: Եվ բուրաստանի տերն ասաց. «Կեսք, որ իմն է հալալ քեզ և կեսք՝ իմ եղբորն է, նրան տեր շեմ: Եվ իմ եղբայրը հետու է այստեղից վեց օրվա ճանապարհ»: Եվ երիտասարդը ճանապարհ ընկավ և գտավ այն մարդուն, ասաց. «Կամ առ քո կես խնձորի գինը և կամ հայալ արա ինձ»: Եվ մարդն ասաց. «Ոչ գինը կառնեմ և ոչ հալալ կանեմ: Թե կուզես որ հալալ անեմ, ևս մի ազջիկ ունեմ՝ որ ոչ ականջ ունի և ոչ էլ լեզու և ոչ ձեռք և ոչ սաք, նրան կին առ, որ հալալ անեմ»:

Երիտասարդն անճարացյաժ առավ այդ ազջկան և երբ առագաստ մտան, տեսավ, որ ազջիկը ամենևին առողջ էր: Եվ երիտասարդն աներոջն ասաց. «Ինչո՞ւ էիր ծաղրում քո ազջկան»: Եվ նա ասաց. «Ես ճշմարիտ էի, որովհետև ծնված օրից իմ ազջիկը արեգակի լույսը երզից է տեսել և օտար մարդու ձայն չի լսել և օտարի հետ չի խոսել և ձեռքով մեղք չի շոշափել և սաքը զընդից գուրս չի գրել: Եվ ևս քեզ նման հալալ մարդ էի ուզում և անա գու եկար»:

ԱՌՅՈՒՄ ԵՎ ՄԱՐԴ



Ի դորավար առյուծ նստել էր ճանապարհին և տեսակ տեսակ գազաններ այդ ճանապարհով գալիս էին դողալով և անցնում: Առյուծը հարցրեց նրանց. «Ինչո՞ւ եք


փախչում և ո՞ւմ անից եք զարհուրած փախչում»: Եվ նրանք ասացին. «Փախիր և դու, որովհետև ահա գալիս է մարդը»: Եվ առյուծն ասաց. «Ո՞վ է մարդը և ի՞նչ է նա և ի՞նչ է նրա ուժը և նրա կերպարանքը, որ փախչում եք նրանից»: Եվ

նրանք ասացին. «Կգա, կտեսնի քեզ և քեզ վնայ կլինի»:

Եվ անա յուր հանդից եկավ մի հողագործ մարդ: Եվ առյուծն ասաց. «Միթե դու ես այն մարդը, որ փախցնում է գաղաններին»: Եվ նա ասաց. «Այո, ես եմ»: Առյուծն ասաց. «Արի կովենք»: Մարդն ասաց. «Այո, բայց քո զենքերը քեզ հեռ են, իսկ իմը՝ տանն են: Եկ, նախ քեզ կապեմ, որպեսզի չփախչես, մինչև ես գնամ առնեմ իմ զենքը և ապա կովենք»: Առյուծն ասաց. «Երդվիր, որ կգաս և ես կլսեմ քեզ»: Մարդն երդվեց և առյուծն ասաց. «Հիմա կապիր ինձ և գնա, շուտ դարձիր»: Մարդը հանեց պարանը և առյուծին պինդ կապով կապեց կազնու ծառին և ծառից կտրեց մի բիր և սկսեց զարկել առյուծին:

Եվ առյուծը գոչեց. «Եթե դու մարդ ես, ավելի խիստ և անխնա զարկիր իմ կողերին, որովհետև այս խելքին այդպես է վայել»:

Մ Ո Ւ Կ Ն Ե Վ Ո Ւ Ղ Տ



Ի մուկ հպարտացավ: Կորով նրա իմաստութունը և նրա սիրտը լցվեց հպարտությամբ: Մուկը գնաց ուղտի մտա և ասաց ուղտին. «Ինձ հրաման

տուր քո կճղակի մեջ բուն դնեմ և այնտեղ բռնակվեմ»: Եվ ուղտն ասաց. «Քեզ փոս կլինի, որովհետև հանկարծ կոխ կտամ քեզ և կմեռնես»: Մուկն ասաց. «Քո սմբակը կակուղ է և ինձ վընաս չի լինի»: Ուղտն ասաց. «Քո արյունը

Քս զլուխը: Եվ մուկը ուղտի կնճակի մեջ
 շինեց իր բունը: Մի անգամ ուղտը ծանր
 բեռան տակ քայլեց և հանկարծակի կոխ տվեց
 մուկին: Եվ մուկը ճչաց և նրա փորից դուրս
 եկավ ճրագուն, որովհետև մուկը գեր էր:

Այդ տեսնելով ուղտն ասաց. «Ահա եզրայր,
 չենց այդ էր նեղում քեզ, որ դուրս ելավ քո
 փորից»:

Ա Ր Վ Ե Ս Տ Կ Ն Ո Ջ



Ի մարդ շրջում էր
 երկրե երկիր և կինն
 ինչ հնար որ աներ,
 նա գրում էր թղթի
 վրա: Եվ նա երեք
 մեծ բեռներ շինեց
 և զեռես գնում էր
 և թղթի վրա գրում

կնոջ հնարը, որով կինը խարում էր մարդուն:
 Եվ նա մտավ մի քաղաք և քաղաքի դռան մոտ
 կար մի խիստ հնարագետ կին և այդ կինը մար-
 դուն ասաց. «Բարի եկար»: Եվ կինը մեծարեց
 նրան և տուն տարավ, կարծելով, թե այն շատ


ունի և կերպաս և ոսկի և արծաթ: Երբ երեկո
եղավ, կի՛նն ասաց այն մարդուն. «Բեռներդ քո
թնչ է, գուցե իմ պետքերի համար մի բան առ-
նեմ»: Եվ նա ասաց. «Ոչինչ չունեմ ծախու»: Եվ
կի՛նն ասաց. «Ապա այդ, որ ունիս, թնչ է»: Եվ
նա ասաց. «Կնոջ հնար է, ինչ կի՛ն, որ հնար
է յարել, շրջել եմ և գրել և բարձել և եկել եմ
այստեղ, որ ուրիշ հնար գրեմ»: Եվ կի՛նն ասաց.
«Բարի եկար»:

Եվ այն ժամանակ կի՛նը կամեցավ բեռներն
այրել և հնարն իմանալ: Տան մեջ կար մի փուռ,
որ կտաներ երեք բեռ թուղթ և կի՛նը բարկ վա-
ռեց փուռը և ձուկ տապակեց և դրեց հյուրի
տոռաջ: Եվ ինքը վեր կացավ, դռները պինդ փա-
կեց և խիստ բարձր ձայնով ճչաց հավար կան-
չելով և եկան զբացիները սուսերներով, բիրե-
րով և բախեցին տան դուռը: Եվ կի՛նն ասաց այն
մարդուն. «Եթե կամենում ես, որ քեզ սպանել
չտամ, թղթերը տուր այրեմ փոխ մեջ, խսկ եթե
ոչ՝ կասեմ, որ այս մարդը բռնաբարեց ինձ և
քեզ սպանել կտամ»:

Եվ մարդը բեռները տվեց նրան և կի՛նը
երեք բեռն այրեց փոխ մեջ և տան դռները բաց
անելով ասաց, «Քանի տարի է իմ հորեղբոր որ-

դին գնացել էր և ահա եկավ և ես նրան ձուկ
տվի ուտելու և փուռը բկի մեջ մնաց և զորով
ազատվեց մահից»: Եվ եկան տեսան, որ ձուկը
նրա տռչկն էր և գնացին:

ԳՍՅԼ ԵՎ ԱՂՎԵՍ ԵՎ ՋՈՐԻ



ԱՅԼՆ և աղվեսն և շորին
եզրայր եղան և զնացին,
երբ սովեցին և որսի չհան-
գիպեցին, ասացին. «Եկեք
ուտենք նրան, ով տարի-
քով փոքր է»:

Այսպես ասային գայլը
և աղվեսը, որովհետև կամենում էին շորուն ու-
տելը Եվ գայլին հարցրին, թե մը տարվա գայլն
ես և նա ասաց. թե ես այն գայլն եմ որին նոյը
տապանն առավ: Եվ աղվեսն առաջ եկավ և ասաց.
«Օ՛, դու տառը ազգով ինձանից փոքր ես, և ես

այն աղվեսն եմ, որին աստված ստեղծեց»:
Եվ շորին եկավ և ասաց. «Իմ ծննդյան թվականը
գրված է սմբակիս վրա. եկեք, կարդացեք տե-
սեք քանի տարեկան եմ»: Եվ ոտքը բարձրաց-
րեց: Աղվեսն ասաց գայլին. «Իհանա, որ գու-
զպրոցում եղել ես, արի գիրը կարդա»:
Եվ գայլը հանձատաց և զնաց կարդալու: Եվ շորին ասաց.
«Առաջ արի, որովհետև գիրս մանր է»:
Եվ նա առաջ զնաց և շորին սաստիկ ուժով զարկեց գայ-
լի ճակատին և ջախջախեց և գայլը գնաց կող-
կոնձալով: Եվ աղվեսն ասաց գայլին.
«Արի մի տող էլ կա, այն էլ կարդա»:

Գայլն ասաց. «Ես ինչ գիտեի գիրը, մենք աղ-
գե ազգ մսագործ ենք և մսագործի որդի»:

ԳՈՂ ՔԱՀԱՆԱ ԵՎ ԱՅՐԻ ԿԻՆ



Ի քահանա գողացավ այրի կընոջ կովը և ախոռը կապեց: Եվ կինն իմացավ և քահանային ասաց. «Տեր հայր, հասավ իմ մահվան ժամը.

գնանք ախոռ, որ խոստովանեմ մեղքերս»: Եվ այն ժամանակ քահանան կովը տարավ ներսի տուն, այնտեղից ժամատուն և այնտեղից եկեղեցի: Եվ կինն ասաց. «Տեր հայր, վերջին խոստովանութիւնը մահից առաջ պետք է անել

եկեղեցում»: Եվ քահանան կովը բեմ բարձրացրեց և վարագույրը քաշեց նրա վրա: Երբ նրանք եկեղեցի մտան և նստեցին, այն ժամանակ կինը բարձրացրեց վարագույրը և կովին ասաց.

«Մ՛ի գարշելի, ես քեզ կով գիտեի և այժմ քեզ թ՛ի արեց պատարագիչ, ասն ինձ»:

Ա Ն Զ Գ Ա Մ Կ Ի Ն



Ի մարդ արտում
նստել էր քարի տակ
և քնեց մի պահ և
զարթնեց և չէր ու-
զում տուն գնալ:
Եվ հանկարծ եկան
երկու ճնճղուկ նըս-
տեցին քարին վը-
րա և մարդուն

հարցրին, թե ինչու նա արտում է: Եվ որովհե-
տե մարդն ասաց, որ արտում է, որովհետև ազ-
քատ է: Ընճղուկներն ասացին, «Կիսստանան
երբեք չասել ոչ ոքի, եթե քեզ ոսկու տեղ ցույց
տանք»: Եվ մարդը խոստացավ և երգվեց և նը-
րանք ասացին. «Այդ քարի տակ յոթ կարաս ոս-

կի կա թաղած, հանիր և տուն տար և եթե ասես
մեկին, թե որտեղից է ոսկին, իսկույն կմեռնես»: Եվ
մարդն ուրախացավ, գնաց յուր տուն, բրիչն
առավ և գիշերով եկավ դաղտնի հանեց ոսկին և
տարավ յուր տուն, սկսեց փարթամանալ և շքեղ
տներ շինել, ունեցավ ձիեր և ջորիներ և եզներ
և ոչխարի հոտեր և այլ ամենայն ինչ, որ վայել
է աշխարհ սիրողին:

Եվ մի օր եզն ասաց մյուս եզան, թե «Ես թնչ
տնեմ, որովհետև ամեն օր անխնա լծում են ինձ»: Էջը,
որ նրան մտիկ էր, ասաց. «Վաղը սուտ
հիվանդ եղիր և հազա: Երբ այդ տեսնեն կխղճան
և այլևս քեզ չեն լծի»: Եվ այն լսելով մարդը
ծիծաղեց և մշակներին ասաց, թե այսօր չէ վա-
ղը, այսինչ նշան էջը հիվանդ եզան տեղ լծեք:
Մշակն առավոտյան էջը տարավ և լծեց մինչև
իրիկուն և երբ տուն եկավ, էջն ասաց հիվանդ
եզան. «Ողորմելի եզնուկ, դու չդիտես, թե ար-
տում ինչ էին ասում. ասում էին, թե այն հի-
վանդ եզը վաղը մորթենք, որ չաստիք: Լսիր
ինձ և ոտքի կաց և առողջ եղիր, գնա լուծդ քա-
ղեր, որ քեզ չմորթեն: Իեզ համար ավելի լավ է
բանել, քան կյանքից զրկվել»: Այսպես ասաց
էջը, որպեսզի այլևս նրան չտանեն լծելու, որով-

հետև այդ օրը շատ էր աշխատել: Եվ այս լսելով մարդը նորից ծիծաղեց:

Այն ժամանակ նրա կինն ասաց. «Ով մարդ, մենք աղքատ էինք և հանկարծ հարստացանք և այսչափ ապրանքի և բարիքի տեր եղանք և ժամ առ ժամ կենում և ինքզ քեզ ծիծաղում ես, ինձ ինչմե չես ասում, թե որտեղից է այս ամենը և դու ինչմե ես ծիծաղում»: Մարդն ասաց. «Ո՞վ դու կին, եթե ասեմ իսկույն կմեռնեմ, դրա համար չեմ ասում»: Իսկ կինը հանդգնեց և ասաց. «Ճար չկա պետք է ասես»: Իսկ նա չէր ուզում ասել, բայց կինը նրան խիստ նեղեց և ասաց. «Պետք է ասես ինձ, եթե մեռնես էլ Եթե ոչ՝ ես ինձ կապանեմ»: Եվ մարդն անձարացավ և ասաց. «Ո՞վ կին, հավատա ինձ, որ առանց տարակուսանքի կմեռնեմ, թե որ ասեմ. երբ թույլ չես տալիս, երեք օր սպասիր, մատաղ անեմ, քահանաներին և աղքատներին կերակրեմ, ասպաքեղ ասեմ և մեռնեմ»: Եվ չար կինը հազիվ հանձն առավ երեք օր սպասել: Եվ մարդը մորթեց շատ ոչխարներ և գառներ և կանչեց քահանաներին, կարգավորներին և աղքատներին և նստեցին ճաշի և մինչդեռ ուտում էին և քմայում, այն մարդն սպասում էր: Եվ մարդն ու-

ներ շտն լակոտ, որ տան մեջ նստել էր լի տըրամոթյամբ և սգով, նույնիսկ արտասուցք էին թափում նրա աչքերից: Եվ իսկույն հանկարծակի եկավ աքլորը հոպարտ և խրոխտալով և ներս մտավ և նրա հետ կային քսան-երեսուն հավ աչից և ձախից: Շան լակոտն սկսեց աքլորին տակ: «Ով լիբր անաղուհաց, լինչ ես խրոխտացել և տեսուի-տեսակ ձայն ես հանում. չգիտես որ մեր տերը վաղը՝ յուր գաղտնիքը պիտի կնոջն տաի և մեռնի: Իսկ դու լալու. փոխարեն ուրախ ես»: Աքլորն ասաց. «Ձվերս ի վայր թե կմեռնի. ես որ նրա ծառան եմ քսան երեսուն կին ունեմ և նրանց զավթ եմ արել, իսկ նա չի կարող մեկին իր հրամանքով պահել»: Շան լակոտն ասաց. «Ի՞նչ անի անզգամ կնոջն»: Աքլորն ասաց. «Երբ ամենքը վեր կենան մատաղից, թող առնի երեք շորս փայտ, դուռը փակի և կնոջն ասի՝ արի քեզ ասեմ գաղտնիքը և նրան բռնի մերկացնի և կապի մի սյունից և այնքան ձեծի նրա կողերին և այլ տեղերին, որ սզ տեղ չմնա, ամենը կապուակի և ասի, թե չար կին, լավ է որ դու մեռնես, քան թե ես և գոնից հանելով նրան դուրս վարի, տակով՝ գնա կորիր ես այլ կին կառնեմ և քեզ չեմ ուզում»:

Եվ աքլորից լսելով այդ բարի խրատը, այն մարդը դարձյալ ծիծաղեց: Եվ անզգամ կինը տեսնելով այդ, ամբոխի մէջ մտեցավ նրան, շամաչելով ոչ մարդկանցից և ոչ քահանաներից և մարդուն ասաց. «Այժմ ինչմա ծիծաղեցիր, ասո՛ւ ինձ և պատմիր, թե ինչպես հարստացար» Եվ մարդն աղաչեց. «Մի քիչ համբերիր, թող հյուրերը գնան և ես քեզ ասեմ, այժմ ամոթ է նրանց առաջ բան ասել»:

Եվ երբ ամենքը գնացին, բնտանիքը դուրս հանեց և դուռն ամուր փակեց և ըստ աքլորի խրատի՝ ձեռքն ատավ կնոջը, ջարդեց ամեն ուկորները և դուրս արեց: Իսկ կինը զզջալով նրա ոտքն ընկավ և լալով և աղաչում էր ասելով «Աստծու սիրուն ինձ բան մի ասա և ամեն օր այսպես ձեծի, միայն ինձ դուրս մի անի և քեզ նից մի հեռացրու, որպեսզի այխարհում խաղճ չլինեմ»:

Եվ այսպես մահից ազատվեց մարդը աքլորի խրատով:

ՎԻՐԱՆՏ ԵՎ ԳԵՂՋՈՒԿ ՄԱՐԳ



Ի զեղջուկ մարդ ազը շալակին բարձրանում էր դժվար սարով և տոթ ժամանակ էր: Եվ շատ հոգնեց մարդը և բեռը վայր գնելով սկսեց բամբասել Ադամին և Եվային, թե ինչմա նրանք

անհամբերությամբ դուրս եկան դրախտից: Եվ խսկույն երևաց հրեշտակը և նրան ասաց. «Եթե քեզ դրախտ տանեմ, դու կհամբերե՞ս: Եվ զեղջուկն ասաց. «Ե՞՞րբ լինի այդ»: Եվ հանկարծ քուն իջավ նրա վրա և տեսավ, որ դրախտն է ընկել և շատ

ուրխացավ: Եվ ապա տեսավ, որ դրախտի մեջ մարդիկ կտրատում են դեռաբույս ծառերը և չհամբերելով ասաց. «Այդ քնչ մարդիկ եք, որ չոր ծառերը թողած, կտրատում եք կանաչ ծառերը»: Եվ աչքերը բաց արեց, տեսավ, որ դարձյալ նստել է աղի բեռան մոտ և սկսեց դառն արտասվել: Եվ գեղջուկ մարդը նորից տեսավ հրեշտակին և ասաց. «Այլևս չեմ խոսիմ»: Եվ նա նորից դրախտ բնկավ և տեսավ, որ մարդիկ կըտրած ճյուղերը և փայտը շալակ են կտպել և չեն կարողանում շալակել, բայց դեռ դարձում են ճյուղ և փայտ: Եվ չհամբերեց և ասաց. «Ով անխելքներ, թեթևացրեք ձեր բեռը, որ կարողանաք շալակել»: Եվ գեղջուկ մարդը նորից գարթնեց դժվար սարի վրա և սկսեց արտասվել և հրեշտակը երբորդ անգամ նրան դրախտ տարավ և նա տեսավ մի մեծ քար, որից կտպել էին տասն երկու յուժ եզ և ամեն մեկը յուր կողմն էր քաշում և քարը չէր շարժվում: Եվ մարդը դարձյալ չհամբերեց և կանչեց. «Ո՞վ հիմարներ, մի կողմի վրա քաշեք և միասին քաշեք, որ քարը տեղից շարժեք»:

Եվ գեղջուկ մարդն ասաց, «Լավ է ես իմ աղը շալակեմ»: Եվ բարձրացավ դժվար սարով:

ԲՈՎ ԱՆ Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Վարդան Այգեկցի	էջ 11
Կարոտ հաշիվ	3
Այբե կին և որդի	5
Միայնակաց և գամփա շուն	7
Այծեր և գայլեր	9
Երկու նկարիչ	11
Առյուծ և աղվես	13
Իմաստուն դատավոր	14
Առյուծ և գայլ և աղվես	16
Գինի	18
Իմաստուն ավագ էջ	20
Միամիտ զոզեր	22
Եղեզն և ծառեր	24
Իշխան և այրի կին	25
Իմաստուն գինվոր	27
Թագավոր և օձ	28
Առյուծ և աղվես և արջ	30
Կաթ մեղու պատճառ պատերազմի	32
Կտակ վասն դանձի	34
Ուզտ և գայլ և աղվես	35
Կուռնկ՝ թագավոր թաշունների և էջ	37

Եզն և ձի	38
Հիմար և ձմերուկ	40
Էջին թու ծնվեց	42
Աղբատ և ափետարան	43
Հայր և սրբի	45
Մարդ և ընկույց և ձմերուկ	46
Եկեղեցի և ջրաղաց	48
Ամենատղետ մարդը	50
Աղվես և սրտորդ	53
Իշխանավոր և իմաստուն	56
Աղվես և թղթատար դայլ	58
Այբի կին և խորթ սրբի	60
Հալալ մարդ	61
Առյուծ և մարդ	63
Մուկն և ուղտ	65
Արվեստ կնոջ	67
Գայլ և աղվես և ջորի	70
Գող քահանա և այբի կին	72
Անդամ կին	74
Իրախտ և զեղջուկ մարդ	79

Խմբագիր՝ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ
 Գեղ. խմբագիր՝ Բ. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ
 Տեխ. խմբագիր՝ Է. ԱՎԱԳՅԱՆ
 Վերստուգող սրբագրիչ՝ Ա. ՕՒԱԲԱՇԽԱՆ

ՎՖ 13483 Պատվեր 823 Տիրած 10 000

Հանձնված է արտադրութայն 12/VI 1955 թ.:

Ստորագրված է տպագրութայն 4/VIII 1955 թ.:

Թուղթ 70 × 108¹/₃₂ Տպագր. Չ, 0 մամ. Հրատ. 1, 6 մամ.:

Գինը կազմով 1ա. 50 կ.:

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրութայն
 Հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերութայն
 Գլխավոր վարչության 1 տպարան
 Այլավերգյանի փ. № 65, Երևան, 1955 թ.: